ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐԻ
ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

«20» ապրիլի 2026 N 99-26

«Պրեստիժ- ֆուդ» ՍՊԸ –ի տնօրեն՝
Պարոն Ս. Ազատյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Ազատյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Պրեստիժ-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 30.12.2026 թ.-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 2026թ. կարիքների համար սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագրով և գնման ու վճարման ժամանակացույցով նախատեսված սննդամթերք (հավի միս):

«Պրեստիժ-Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված և հայտ-պահանջագրով պահանջված հավի մսի խմբաքանակը, որն էլ լուրջ դժվարություններ է առաջացնում ճաշացանկի կազմման ժամանակ, քանի որ վերոնշյալ ապրանքատեսակը ճաշացանկում ներառվում է շաբաթը հինգ օր:

Համաձայն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ-12-ՄԻ» Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 «բ» կետերի գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը, մասնավորապես՝

1. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի փոխարինվել գնորդի համար ընդունելիժամկետում,
2. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել

ՀՀ, Երևան ✉ 375037 , Մ. Յաղուբյան 13,
էլ. հասցե՝ maryizmirlyan.childcarecenter@mlsa.am, հեռ.՝ 010201586

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐԻ
ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

« » 2026 N

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պրեստիժ-Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ապրանքի մատակարարում չի իրականացվել ըստ հայտ պահանջագրի որի պատճառը եղել է մատակարարման անբաժանելի մաս կազմող անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթ՝ Ձև 5-ի ոչ ճիշտ լրացումը (սպանդի ամսաթվի և արտադրման ամսաթվի անհամապատասխանություն, ինչպես նաև տեխնիկական բնութագրով պահանջվող ամբողջական հավի փոխարեն մասնատված հավ նշված լինելը), գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ 667104,65 (վեց հարյուր վաթսունյոթ հազար հարյուր չորս դրամ, վաթսունհինգ լումա) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով, «Պրեստիժ-Ֆուդ» ՍՊԸ-ին տրվում է 5 աշխատանքային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման՝ 77593,5 (յոթանասունյոթ հազար հինգ հարյուր իննսուներեք դրամ, հիսուն լումա) ՀՀ դրամ «900008000664» հաշվեհամարի և որակավորման ապահովման՝ 116 390,25 (մեկ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր իննսուն դրամ, քսանհինգ լումա) ՀՀ դրամ՝ «900008000698» գումարները հաշվեհամարին փոխանցելու համար:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն «ՆՆ Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կներկայացվեն մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ, Երևան ✉ 375037 , Մ. Յաղուբյան 13,
էլ. հասցե՝ maryizmirlyan.childcarecenter@mlsa.am, հեռ.՝ 010201586